

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆԴԵՊ 1990-ԱԿԱՆ ԹԹ.
Հովհաննիսյան Ա. Հ.**

Թուրքիայի դիրքորոշումը պաղեստինյան հարցի հանդեպ 1990-ականների սկզբներին հիմնականում պայմանավորված էր իր դաշնակիցներ հանդիսացող ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից պաղեստինյան շարժման և այն ղեկավարող ՊԱԿ-ի նկատմամբ արձանագրված փոփոխություններով: Դա էր պատճառը, որ Թուրքիայում ստեղծվեց Պաղեստինի հյուպատոսություն, իսկ Երուսաղեմում վերաբացվեց թուրքական հյուպատոսությունը: Չնայած 1996թ. վարչապետ Էրբականը փորձ արեց վերանայել այդ հարաբերությունները, սակայն բանակն ու նախագահ Դեմիրելը կանխեցին այն: Այս իրավիճակը պահպանվեց մինչև 2002 թ., երբ նախ վարչապետ Էջեվիթը, ապա նրան փոխարինած Էրդոդանը իրենց գործողություններով որոշակի լարվածություն մտցրին թուրք-իսրայելական հարաբերություններում:

Բանալի բառեր. Պաղեստինյան ինքնավարություն, Իսրայել, Թուրքիա, Էրբական, Էրդոդան, Դ. Լեվին, Վայցման, Արաֆաթ, ՊԱԿ:

Նախաբան: Հակամարտությունների լուծումը այսօր համարվում է համաշխարհային հանրության առջև ծառայած գերխնդիրներից մեկը, որոնց լուծման ուղիների շուրջ առաջացած տարաձայնությունները և քաղաքական ակտիվությունը կարելի է համարել համոզիչ փաստարկ հոգուտ այն բանի, որ հակամարտությունները ոչ միայն տարաբնույթ են և բազմակողմանի, այլև շոշափում են բազմաթիվ պետությունների շահերը [3]:

Առաջանալով 1947թ. որպես իսրայելա-պաղեստինյան խնդիր՝ հակամարտությունը հետագա տարիներին վերաճեց արաբա-իսրայելականի՝ [4] իր ոլորտը ուղղակի կամ անուղղակի կերպով ներառելով Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր երկրները, ինչպես նաև

համաշխարհային գերտերությունները, որոնք ունեն իրենց ռազմավարական շահերը այս տարածաշրջանում [5]: Այս առումով բացառություն չէ նաև Թուրքիան՝ տարածաշրջանի հիմնական ազդեցիկ ուժերից մեկը, որը հավակնում է տարածաշրջանային գերտերության կարգավիճակի: Եվ քանի որ Իսրայելի հետ ցանկացած պետության փոխհարաբերություն անհնար է պատկերացնել առանց պաղեստինյան հակամարտության հաղեպ տվյալ պետության ցուցաբերած դիրքորոշման, հետևաբար թուրք-իսրայելական հարաբերությունները մենք փորձել ենք դիտարկել հենց այդ պրիզմայով:

Թուրքիայի և Իսրայելի միջև նոր որակի հարաբերությունների ձևավորումը 1990-ականների սկզբներին պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով: Իսրայելի և Պաղեստինի Ազատագրության Կազմակերպության՝ ՊԱԿ [6]-ի միջև սկսված երկխոսությունը (խոսքը վերաբերում է պաղեստինյան մի քանի միավորումների հիմքի վրա 1964թ. մայիսին Արևելյան Երուսաղեմում Արաբական Լիգայի կողմից՝ Եգիպտոսի նախագահ Նասերի մտահաղացմամբ ստեղծված Պաղեստինի ազատագրության կազմակերպությանը: ՊԱԿ-ի մեջ կային 11 կազմակերպություններ, որոնցից ամենահայտնին Ֆաթհ-ն էր՝ հիմնադրված 1958թ. Հորդանանում Յասեր Արաֆաթի կողմից) կարծես թե երաշխիքներ էր ստեղծում տարածաշրջանում կայունություն և խաղաղություն հաստատելու համար և տասնամյակներ տևած ազգամիջյան հակամարտության լուծման համար [12]: Այսպիսի պայմաններում Թուրքիան, բնականաբար, պետք է ձգտեր բարիդրացիական հարաբերություններ հաստատել արդեն երկու կողմերի հետ: Դա կարելի է բացատրել նաև այն հանգամանքով, որ Թուրքիան ստիպված էր հաշվի առնել ավագ գործընկերոջ՝ ԱՄՆ-ի և տարածաշրջանում իր հիմնական դաշնակցի՝ Իսրայելի¹ դիրքորոշումների փոփոխությունը: Այս երկրները ճանաչեցին ՊԱԿ-ը, և վերջինս ներգրավվեց բանակցությունների ֆորմատի մեջ [15]: Թուրքիան ակնկալում էր նաև ԱՄՆ-ի հզոր հրեական լոբբիի աջակցությունը ոչ միայն ԱՄՆ-ում, այլև ԵՄ հետ հարաբերությունների կարգավորման հարցում: 1991թ. Թուրքիայում գործող Պաղեստինի ներկայացուց-

¹ Իսրայելի հետ Թուրքիայի համագործակցությունը ինչ-որ տեղ պարտադրված էր, քանի որ Թուրքիայում գործող Քրդական բանվորական կուսակցությանը աջակցում էին հարևան Իրանը, Սիրիան, Իրաքը, բացի այդ, վերջին երկու երկրների հետ Թուրքիան ուներ լուրջ տարաձայնություններ ջրային ռեսուրսների օգտագործման հարցում:

չությունը բարձրացվեց հյուպատոսության աստիճանի, իսկ 1992 թ. վերաբացվեց Թուրքիայի հյուպատոսությունը Երուսաղեմում: ԱՄՆ-ը, որը սկսել էր իրականացնել «ՌԱՆԴ» ընկերության կողմից² մշակված Նոր Մեծ Մերձավոր Արևելքի կերտման ծրագիրը, ամեն կերպ խրախուսում էր թուրք-իսրայելական հարաբերությունների սերտացման գործընթացը: 1996 թ. փետրվարի 23-ին երկու երկրների միջև ստորագրվեց պայմանագիր «ռազմատեխնիկական բնագավառում մասնագետների պատրաստման և համագործակցության մասին», իսկ մի փոքր ուշ՝ «պայմանագիր ազատ առևտրի իրականացման մասին»: Այս համաձայնագրերից կարևոր էր հատկապես առաջինը, որը հնարավորություն էր տալիս Իսրայելին օգտագործել Թուրքիայի օդային տարածքը սեփական ռազմական ինքնաթիռների համար, կատարելագործել և նոր էլեկտրոնիկայով վերազինել թուրքական օդուժը, համատեղ արտադրել հրթիռներ:

Թուրքիայի քաղաքական որոշ շրջանակներ 1996 թ. Ամռանը [7], երբ իշխանության եկավ Էրբակյանի «Ռեֆահ»՝ «Բարօրություն» կուսակցությունը, որն իսլամական արժեքներին հետևելու կողմնակից էր,³ ավելի հակվեց Իսրայելի հետ համագործակցությանը որպես հակակշիռ նոր վարչապետի՝ արտաքին քաղաքական հարցերում հնարավոր փոփոխության [13]: Էրբակյանը պաշտոնական այցեր կատարեց Իրան, Պակիստան, Լիբիա և այդ երկրների ղեկավարներին հավաստիացրեց, որ հավատարիմ է իսլամական արժեքներին և ատում է սիոնիզմը որպես գաղափարախոսություն: Բայց նախագահ Դեմիրելի և բանակի ղեկավարության ճնշման ներքո նա 1997 թ. ապրիլին ստիպված էր ընդունել Իսրայելի ԱԳՆ Դ. Լեվիին [21]: Թուրքիայի ռազմական ղեկավարությունը հանրային և մասնավոր մակարդակով սկսեց

² RAND կամ Research and Development, ամերիկյան ռազմավարական հետազոտությունների կենտրոն: Ձբաղվում է ԱՄՆ-ի ազգային անվտանգության և ռազմավարական ծրագրավորման հարցերով: Ստեղծվել է 1948 թ. Սանտա Մոնիկայում ինքնաթիռների, հրթիռների ծրագրավորման համար: Աշխատում է ամերիկյան կառավարության պետական պատվերով:

³ Էրբակյանը քաղաքական արենա էր վերադարձել դեռևս 1987թ. և գլխավորել էր «Ռեֆահ»՝ «Բարօրություն» կուսակցությունը: 1995թ. Նախընտրական քարոզչության ժամանակ հայտարարել էր Իսրայելի հետ հարաբերությունների վերանայման, ՆԱՏՕ-ից դուրս գալու և արաբական երկրների հետ հարաբերությունների բարելավման մասին: Էրբակյանը առաջին ուղղափառ մուսուլմանն էր, որը դարձավ Թուրքիայի վարչապետ: Սակայն ավելի ուշ Թուրքիայի Սահմանադրական դատարանը, մեղադրելով «Ռեֆահ» կուսակցությանը պետությունը իսլամացնելու մեջ՝ արգելեց վերջինիս գործունեությունը և Էրբակյանը ստիպված էր հրաժարական տալ:

բացատրել վարչապետ Էրբականին Իսրայելի հետ համագործակցության արժեքը ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից [22]: Հավաստելու համար իրենց հավատարմությունը Իսրայելին՝ թուրքական բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Քարադայը 1997 թ. Փետրվարին այցելեց Թել-Ավիվ և հայտարարեց, որ «Թուրքիան այլ երկրների չի տրամադրի Իսրայելին առնչվող ռազմական տեղեկություններ և ռազմական տեխնոլոգիաներ» [23]: Փոխադարձ այցի արդյունքում Անկարայում 1997 թ. հունիսի 11-13-ը Իսրայելի նախագահ Վայցմանը կոչ արեց Թուրքիայի նախագահ Դեմիրելին չենթարկվել ճնշումների արաբական երկրների կողմից և շարունակել համագործակցությունը Իսրայելի հետ: Էրբական-բանակ հակամարտության արդյունքում Էրբականը ստիպված էր հրաժարական տալ ժամկետից շուտ: Էրբականի դեմ հադես եկող թուրքական աշխարհիկ ուժերին ներքաղաքական աջակցություն ապահովելու համար Իսրայելը խոստացավ տրամադրել հետախուզական տեղեկություններ, «Մերկավ» տեսակի տանկեր, հակահրթիռային համակարգեր և օգնել Թուրքիային Իրանի և արաբական երկրների հետ սահմանների ամրապնդման հարցում, անցկացվեցին համատեղ ծովային ռազմավարական քննարկումներ [24]: Արձագանքը իրեն ուշացնել չտվեց, և Եգիպտոսի, Սիրիայի, Սաուդյան Արաբիայի, Լիբիայի, Իրանի և Հունաստանի ներկայացուցիչները համատեղ հայտարարությամբ կոչ արեցին Թուրքիային վերանայել իր դիրքորոշումը [24]: Թուրքիան ոչ միայն չփոխեց իր դիրքորոշումը, այլև 1997 թ. վերջին նոր վարչապետ Յլմազը հայտարարեց, որ սղաճի հետևանքների վերացման համար Թուրքիան ընտրում է իսրայելական տարբերակը [25]:

Թուրք-իսրայելական հարաբերությունների զարգացման համար հատկապես արդյունավետ էր 1998 թ.: Իսրայելը մեծ հետաքրքրություն ցուցաբերեց Եփրատի վրա Թուրքիայի կողմից կառուցվող Աթաթուրքի անվան ամբարտակի շինարարության հանդեպ: Այդ կառույցի շինարարությունը նպատակ էր հետապնդում արդիականացնել հարավարևելյան Անատոլիայի գյուղատնտեսությունը: Գյուղատնտեսության և ոռոգման ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների տիրապետող Իսրայելը պատրաստակամություն հայտնեց ոչ միայն իր փորձը փոխանցել Թուրքիային, այլև որոշում ընդունեց կառուցել Թուրքիայի հարավարևելյան շրջաններում կաթնավերամշակման ժամանակակից գործարան: Չնայած երկկողմանի հավաստիացումներին, որ ամբարտակի շինարարությունը ունի զուտ տնտեսական նշանա-

կություն, Սիրիայում մեծ դժգոհություններ առաջ եկան, քանի որ այդ դեպքում զգալիորեն նվազում էր Սիրիա մուտք գործող Եփրատի ջրերի քանակությունը [16]: Թուրքիայում Իսրայելի գլխավոր հյուպատոս Շաքերի կարծիքով Մերձավոր Արևելքում ջրի ահագնացող պահանջների պայմաններում ամբարտակի կառուցումը և նոր տեխնոլոգիաների օգտագործումը թույլ կտան խնայել ջուրը և օպտիմալ օգագործել [17]:

Թուրք-իսրայելական հարաբերությունները ներդաշնակ էին նաև Վրաստանի և Ադրբեջանի հանդեպ վարվող քաղաքականության համատեքստում, որը ենթադրում էր ռազմատնտեսական համագործակցություն անդրկովկասյան այդ երկու երկրների հետ: Այդ համագործակցությունն ավելի ամրապնդվեց 1998 թ. ամռանից հետո, երբ Իրանը փորձարկեց «Շահաբ-3» հրթիռը, որը հնարավորություն ուներ հարվածելու Թուրքիային, Իսրայելին և Սաուդյան Արաբիային: Այն բանից հետո, երբ Պենտագոնը հայտարարեց, որ իրանական հրթիռի փորձարկումը պետք է ավելի շատ մտահոգի Թուրքիային, վերջինս ավելի մեծ տեմպերով հակվեց Իսրայելի հետ համագործակցության: Թել Ավիվում տեղի ունեցավ խորհրդակցություն «Թուրք-իսրայելական ռազմական երկխոսություն» խորագրով, որի արդյունքում որոշվեց ստեղծել թուրք-իսրայելական համատեղ հակահրթիռային պաշտպանության համակարգ:

Երկու երկրների միջև համագործակցության զագաթնակետ հանդիսացավ Թուրքիայի վարչապետ Մ. Յիմազի այցը Իսրայել, Պաղեստին, Հորդանան, որի արդյունքում ստորագրվեց տնտեսական բնույթի պայմանագիր, որը հնարավորություն էր տալիս Թուրքիային օգտագործել իսրայելական Հայֆա նավահանգիստը: Թուրքական կառավարությունում տնտեսական հարցերով պատասխանատու Ի. Չելեքին հայտարարեց, որ համաձայնագիրը նախօրոք հավանության է արժանացել ԱՄՆ-ի կողմից: Յիմազը հաղիպեց Իսրայելի վարչապետ Նեթանյաուի և նախագահ Վեյցմանի հետ՝ շեշտելով, որ երկու երկրների միջև համագործակցությունը տարածաշրջանում խաղաղության և կայունության երաշխիքն է: Թուրք հայտնի քաղաքական մեկնաբան Ս. Քոհենի կարծիքով երկու երկրներին միավորում է պայքարը ահաբեկչության դեմ, զենքի մատակարարումը Թուրքիային, սիրիական վտանգը և ԱՄՆ-ի դրական վերաբերմունքը այդ համագործակցությանը [14]: Ամերիկյան հայտնի քաղաքագետ, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Գ. Ֆուլլերի կարծիքով, որը 20 տարի աշխատել էր ԱՄՆ-ի

պետքարտուղարությունում, թուրք-խորհրդային համագործակցության արդյունքում չնայած ստեղծվում է ռազմավարական նշանակության միություն, բայց մյուս կողմից նկատելիորեն վատանալու են թուրք-արաբական, հասկապեն թուրք-սիրիական հարբերությունները, որն էլ կարող է խանգարել խաղաղության գործընթացին Մերձավոր Արևելքում [18]: 1998 թ. սեպտեմբերին Կահիրեում հրավիրված արաբական երկրների արտգործնախարարների զագաթաժողովը քննարկեց թուրք-խորհրդային համագործակցության հարցը, բայց, որքան էլ տարօրինակ թվա, չընդունեց Սիրիայի և Լիբանանի կողմից պատրաստած բանաձևը, որը դատապարտելու էր Թուրքիային [8]: Հորդանանի, Օմանի ներկայացուցիչները, ՊԱԿ-ի ղեկավար Յ. Արաֆաթը հայտարարեցին, որ թուրք-խորհրդային համագործակցությունը ոչ միայն վտանգավոր չէ արաբական երկրների համար, այլև այդ վտանգը չափազանցված է [1]: Մեր կարծիքով Արաֆաթի և Հորդանանի նման դիրքորոշումը պայմանավորված էր նրանով, որ նույն թվականի հոկտեմբերի 22-ին ԱՄՆ-ի Ուայ-Փլանթեյշն վայրում նախապատրաստվում էր ստորագրել համաձայնագիր Իսրայելի և Պաղեստինյան ինքնավարության միջև Իսրայելի կողմից Պաղեստինին նոր տարածքներ և իրավասություններ փոխանցելու մասին [11]: Բացի այդ Թուրքիայի վարչապետը հասցրել էր բացատրական այցեր կազմակերպել որոշ արաբական երկրներ: Բայց եղան նաև երկրներ, որոնք հանդես եկան խիստ քննադատության դիրքերից: 1998 թ. Թեհրանում տեղի ունեցած «Իսլամական Կոնֆերանս» կազմակերպության նիստում Սիրիայի, Եգիպտոսի, Լիբանանի և Մաուրիտանիայի Արաբիայի ներկայացուցիչները «թուրք-խորհրդային Անտանտը» որակեցին որպես կառույց, որի նպատակն է վերանայել Մերձավոր Արևելքի քաղաքական քարտեզը [9]: Այդ մեղադրանքը ավելի արդիական հնչեց 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո, երբ թուրքական կողմից կոչ եղավ ԱՄՆ-ին պաշտպանել թուրք-խորհրդային դաշինքը որպես հենարան ահաբեկչության դեմ տարվելիք պայքարի:

Իրավիճակը լուրջ փոփոխությունների ենթարկվեց ոչ միայն թուրք-խորհրդային հարաբերությունների առումով, այլև պաղեստինյան խնդրի վերաբերյալ Թուրքիայի ցուցաբերած դիրքորոշման մեջ 2000-ականների սկզբներից: Այս երկու խնդիրները սերտորեն փոխկապակցված են: 2000 թ. հուլիսի 11-25-ը ԱՄՆ-ի նախագահ Բիլ Կլինթոնի կազմակերպած Քեմփդևիդյան զագաթաժողովը չլուծեց Իսրայելի և Պաղեստինյան ինքնավարության միջև առկա գլխավոր

խնդիրները՝ Արևելյան Երուսաղեմի կարգավիճակը, պաղեստինցի փախստականների կարգավիճակը և հրեական բնակավայրերի կառուցումը: Ավելին, սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին սկսվեցին բախումներ իսրայելական զորքերի և պաղեստինցիների միջև, որը որակվեց երկրորդ ինթիֆադա:⁴ Թուրքիայի դիրքորոշման մեջ փոփոխություններ մտան 2002 թ. նոյեմբերից հետո, երբ այդ երկրում հաղթեց «Արդարություն և զարգացում» կուսակցությունը, որի առաջնորդ Էրդողանը հայտարարեց, որ Իսրայելի դիրքորոշումը պաղեստինյան ժողովրդի նկատմամբ Թուրքիան դիտարկում է որպես «Շարունի ահաբեկչություն» [2]: Սակայն Թուրքիան չէր պատրաստվում առայժմ էական փոփոխություններ մտցնել թուրք-իսրայելական հարաբերություններում: Պատճառն այն էր, որ Թուրքիայի համար պաղեստինյան ժողովուրդն ու նրա պայքարը ղեկավարող ՊԱԿ-ը տարբեր հարթություններ են հաղիսացել: ՊԱԿ-ին համարելով քրդերի և հայերի հետ համագործակցող ուժ՝ Թուրքիան մինչև 1979 թ. չէր ճանաչում այդ կառույցը: Նույնիսկ 1988 թ. Թուրքիան, ճանաչելով Պաղեստինյան ինքնավարությունը, չէր համագործակցում ՊԱԿ-ի հետ: Այս երկակի չափանիշները երևում էր առաջին ինթիֆադայի տարիներին, երբ 1994 թ. Թուրքիայի վարչապետ Թ. Չիլլերը Արևելյան Երուսաղեմում այցելեց պաղեստինյան ինքնավարության ներկայացուցիչներին և դատապարտեց Իսրայելի գործողությունները պաղեստինցի ժողովրդի նկատմամբ: Էջնիթի կառավարությունը և նախագահ Ա. Սեզերը խիստ քննադատեցին Իսրայելին երկրորդ ինթիֆադայի

⁴ 26.1987թ. վերջին Հորդանանի Արևմտյան ափում և Ղազայի հատվածում սկսվեց արաբների ապստամբությունը, որը պատմության մեջ մտել է Ինթիֆադա անունով: Այս ապստամբությունը տարօրինակ ընթացք ուներ և ինչ-որ տեղ նույնիսկ չէր համընկնում «ապստամբություն» տերմինի դասական պատկերացման հետ: Ապստամբությունը ուղեկցվում էր ցույցերով, բախումներով, իսրայելական զինվորների և քաղաքացիների վրա քարեր նետելով: Իսրայելական կառավարությունը դիմեց դաժան քայլերի, որոնք քննադատության առարկա դարձան ՄԱԿ-ի և նույնիսկ ԱՄՆ-ի կողմից: 1988թ. նոյեմբերի 15-ին Ալժիրում Պաղեստինյան Ազգային Խորհուրդը ընդունեց հռչակագիր Պաղեստինի անկախության վերաբերյալ: Վերոհիշյալ հռչակագրում ՊԱԿ-ը մի կողմից հաստատում է իր պարտավորությունները ՄԱԿ-ի սկզբունքների, պահանջների, մարդու իրավունքների պահպանման հանդեպ, իսկ մյուս կողմից հաստատում է իր պարտավորությունները մնալ Արաբական Լիգայի կազմում, կորդինացնել կապերը արաբական երկրների հետ, ինչպես նաև ակտիվացնել ջանքերը Իսրայելի օկուպացիան վերջ տալու համար: Միաժամանակ հռչակագրում շեշտվում է, որ Պաղեստինը խաղաղասեր երկիր է և համաձայն է խաղաղ համագոյակցության սկզբունքին: Փաստորեն անկախության հռչակագիրը կարելի է համարել ինթիֆադայի բարձրակետը: Այդ միտքը արտահայտված է նաև հռչակագրում:

Ժամանակ և նույնիսկ պաշտպանեցին ՄԱԿ-ում Իսրայելին քննադատող բանաձևը: 2002 թ. ապրիլին Թուրքիայի վարչապետ Էջևիթը քննադատեց Իսրայելին «պաղեստինյան ժողովրդին գենոցիդի ենթարկելու կապակցությամբ», որից հետո Իսրայելի ղեկավարությունը ոչ միայն անհապաղ բացատրություն պահանջեց, այլև ԱՄՆ-ի հրեական լոբբիի միջոցով սկսեց եզրեր փնտրել հայկական լոբբիի հետ համագործակցելու համար, որից ահաբեկված Էջևիթը հաղես եկավ պաշտոնական ներողությամբ: Այդ ամենով հանդերձ՝ 2003 թ. գարնանը, երբ ԱՄՆ-ը սկսեց ռազմական գործողություններ Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնին տապալելու ուղղությամբ, թուրքական հասարակությունը հանդես եկավ ընդդեմ պատերազմի, իսկ թուրքական նոր ղեկավարությունը հրաժարվեց տարածք տրամադրել ամերիկյան զինված ուժերին: Իսրայելը հակառակ դիրքորոշում որդեգրեց, սակայն ԱՄՆ-ի կողմից Սադդամին տապալելուց հետո Թուրքիան և Իսրայելը որոշակի փորձեր ձեռնարկեցին հարաբերությունների բարելավման ուղղությամբ:

Ինչպես Էրբականի կառավարության տարիներին, այս անգամ ևս Թուրքիայի ռազմական վերնախավը հայտարարեց Իսրայելի հետ համագործակցությունը շարունակելու օգտին, և 2003 թ. օգոստոսին անցկացվեցին համատեղ գորավարություններ, որոնց մասնակցեց նաև ԱՄՆ-ը, Թուրքիա այցելեց Իսրայելի նախագահ Մ. Կացավը: 2004 թ. կեսերին թուրք-իսրայելական հարաբերությունները նորից վատացան՝ կապված Իսրայելի կողմից պաղեստինյան ղեկավարների և ՀԱՄԱՍ-ի դեմ իրականացրած ուժային միջոցառումների հետ: Բացի այդ, ամերիկյան մամուլում լուրեր շրջանառվեցին, որ Իսրայելը քրդական զինված խմբեր է ստեղծում հյուսիսային Իրաքում [9]: Իրավիճակն այնքան վատ էր, որ նույնիսկ 2004 թ. ամռանը Ստամբուլում կայացած ՆԱՏՕ-ի գագաթաժողովի ժամանակ ԱՄՆ-ի նախագահ Բուշը ստիպված էր որոշակի ճնշումներ գործադրել Թուրքիայի վարչապետ Էրդողանի վրա Իսրայելի հետ հարաբերությունները բարելավելու համար [19]: Թուրքիային հիշեցրին, որ երկու երկրների միջև առևտրաշրջանառությունը կազմում է 1.4 միլիարդ դոլար, և որ Թուրքիան 20 տարով 50 միլիոն խորանարդ մետր ջրի մատակարարման պայմանագիր ունի Իսրայելի հետ: Այնուամենայնիվ, Թուրքիան շարունակում էր իր աջակցությունը հայտնել պաղեստինյան ինքնավարությանը և 2004 թ. վերջին կնքեց պայմանագիր «Պաղեստինին անվերադարձ 1 միլիոն դոլարի ֆինանսական օգնության հատկացման մասին», իսկ Թուրքիայի

նախագահ Ա. Գյուլը հայտարարեց, որ այդ տիպի օգնություններ կլինեն նաև հետագայում:

2005թ. հունվարին Մահմուդ Աբասի՝ Պաղեստինյան ինքնավարության վարչապետ դառնալը և ԱՄՆ-ի կողմից «ճանապարհային քարտեզի» առաջարկումը հակամարտության կարգավորման ուղղությամբ [20] նոր հնարավորություններ ստեղծեց պաղեստինյան հակամարտության կարգավորման համար, և Թուրքիան այս պարագայում նույնիսկ որոշակի միջնորդական գործառույթներ իրականացրեց՝ տրամադրելով տարածք բանակցությունների համար: Դա հնարավորություններ ընձեռեց նաև աշխատանքներ տանել հարաբերությունների կարգավորման համար: Թուրքիան փորձեց հարաբերությունները Իսրայելի հետ կարգավորել նոր հիմքերով: Թուրքիայի արտգործնախարարի այցը Իսրայել նշանակում էր, որ հետայսու իսրայելա-թուրքական հարաբերությունները պայմանավորված են լինելու նաև պաղեստինյան հակամարտության ուղղությամբ Իսրայելի թափած ջանքերի արդյունավետությամբ: 2005 թ. կեսերին Թուրքիայի վարչապետ Էրդողանի Իսրայել այցից առաջ հայտարարվեց, որ վերջինս Իսրայել է ուզում ժամանել «դիվանագիտական հաջողություններ ունենալով ճամպրուկում՝ կապված Պաղեստինյան հակամարտության կարգավորման հետ»:

Այսպիսով, Թուրքիայի դիրքորոշումը պաղեստինյան հակամարտության հանդեպ կարելի է պայմանավորել հետևյալ գործոններով.

1. Պաղեստինյան հակամարտության նկատմամբ ԱՄՆ-ի ցուցաբերած դիրքորոշման ազդեցությամբ,
2. Իսրայելի հետ ռազմավարական և ռազմատեխնիկական դաշինքի առկայությամբ, որը հակակշիռ է Սիրիային, Իրանին,
3. Պաղեստինի արաբ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչմամբ և աջակցությամբ,
4. Տարածաշրջանային գերտերության կարգավիճակ ստանալու ձգտմամբ:

ПОЗИЦИЯ ТУРЦИИ ПО ОТНОШЕНИЮ К ПАЛЕСТИНСКОМУ КОНФЛИКТУ 1990-ЫХ Г.

Оганнисян А. Г.

Позиция Турции по палестинскому вопросу в 1990-х годах была в значительной степени обусловлена изменениями, внесенными ее

союзниками, США и Израилем по отношению к Палестинскому движению и ООП. По этой причине было создано консульство Палестины в Турции, а турецкое консульство было вновь открыто в Иерусалиме. Несмотря на то, что в 1996 г. Премьер-министр Эрбакан попытался пересмотреть эти отношения, армия и президент Демирель предотвратили это. Такая ситуация сохранялась до 2002 года, когда премьер-министр Эджевит и заменивший его Эрдоган своими действиями создали некоторую напряженность в турецко-израильских отношениях.

Ключевые слова: Палестинская автономия, Израиль, Турция, Эрбакан, Эрдоган, Д. Левин, ООП, Арафат, Вайтман.

TURKEY'S POSITION ON THE RELATION OF THE PALESTINIAN CONFLICT IN THE 1990S

Hovhannisyan A. H.

Turkey's position on the Palestinian issue in the 1990s was largely due to the changes made by its allies, the United States and Israel, in relation to the Palestinian movement and the PLO. For this reason, the consulate of Palestine was established in Turkey, and the Turkish consulate was reopened in Jerusalem. Despite the fact that in 1996, Prime Minister Erbakan tried to redefine this relationship, the army and President Demirel prevented it. This situation persisted until 2002, when Prime Minister Ecevit and Erdogan, who replaced him, through their actions created some tension in Turkish-Israeli relations.

Keywords: Palestinian Authority, Israel, Turkey, Erbakan, Erdogan, D. Lewin, Waitman, Arafat, PLO.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հովհաննիսյան Ն. Արաբական Արևելքը ԱՄՆ-ի քաղաքականության մեջ Երկրորդ համաշխարհայինի տարիներին: Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ: ԳԱԱ հրատ.: Հ. 9: Երևան 1978: Էջ 238:
2. Պ. Քեչիշյան Քրդական հարցը Սիրիայի պատերազմի պայմաններում: «ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ: #208: 22-11-2012:

3. Васильев А. Россия на Ближнем и Среднем Востоке-от мессианства к прагматизму. Москва. Наука, изд. Фирма „Восточная литература. 1993. С. 303.
4. Киреев Н. Г. ИВ РАН «Религиозный экстремизм, угроза внутренней стабильности Турции.»// Ближний Восток: Проблемы региональной безопасности (сборник статей). М. 2000. 208 с.
5. Иванова И.И. Ближний Восток в турецко-американских отношениях, Институт Востоковедения РАН,
Режим доступа: <http://www.ivran.ru/component/content/article/16-conferences/255-conf-1-3112010>.
6. Мирзоев Э. Не всё ладно в королевстве Арафата.// Вестник. 2002. Номер 19(304) г., <http://vestnik.com/issues/2002/0918/koi/mirzoev.htm>
7. Газета "Коммерсантъ", № 111 (1069), 02.07.1996 . Политическая ситуация в Турции. Валерия Сычева.
8. Журнал "ДИПЛОМАТИЧЕСКИЙ ВЕСТНИК"// январь, 2003год, Справочная информация.
9. В Тегеране открывается 30-я конференция ОИК на уровне МИД. www.centrasia.ru.
10. Региональные и международные аспекты политики турецкого правительства по отношению к курдскому меньшинству, <http://www.histmania.ru/istorias-153-1.html>
11. The Wye Memorandum, Historical Documents, Washington D. C. 10. 23.1998.
12. Viotti P., Kauppi M. International Relations Theory, Realism, Pluralism, Globalism. New York. Macmillan, Cop. 1987. p. 3.
13. Khalidi W. Binationalism not Partition, from Haven to Conquest. Beirut. Institute for Palestine Studies. 1971. 647 p.
14. Report to the General Assembly of the UN Special Committee On Palestine, Official Records of The Second Session of GA, 1947, Supplement #11
15. Quandt W. B. Peace Process: American Diplomacy and the Arab-Israeli Conflict Since 1967. Washington, DC, and Berkeley, CA: Brookings Institution Press and University of California Press, 2005. pp. 495-496.
16. Darwish A. The Next Major Conflict in the Middle East. Water Wars. A Lecture by Geneva Conference on Environment and Quality of Life, June, 1994.

17. Ministry of National Infrastructures – Water Commission, Long term Tasks of the Israeli Water Sector. Tel Aviv. 2000.
18. The new Turkish republic: Turkey as a Pivotal State in the Muslim World. US Institute of Peace Press. 2008. ISBN 1-60127-019-4.
19. NATO, The Istanbul Declaration: Our Security in a New Era , June 28, 2004.
20. Babayan A, Baghdasaryan S. Debates and Interviews. Yerevan. YSU Press. 2001. 66 p.
21. Gregory A. Burris, The Middle East--Turkey & Israel: the Turkish-Israeli Entente & Potential Mines in its Path, Agence France-Press. June 9, <https://www.proconservative.net/PCVol5Is288BurrisTurkeyIsraelMEQ.s.html>
22. <http://gazetearsivi.milliyet.com.tr/Arsiv/1997/06/12.Milliyet.12.06.1997>.
23. https://spiderbites.nytimes.com/1997/articles_1997_04_00003.html. New York Times. 16.04.1997.
24. https://spiderbites.nytimes.com/1997/articles_1997_05_00000.html New York Times. 16.05.1997.
25. <https://apnews.com/>.The Associated Press.

Տեղեկություններ հեղինակի մասին

Հովհաննիսյան Ա. Հ. - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Շիրակի պետական համալսարան

Էլ. փոստ artakh762mail.ru

Տրվել է խմբագրություն 18.10.2019